ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2022թ. **N _____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԳԵՏԱՌԻ ՎՐԱ ՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 3-րդ հոդվածի դրույթները և Երևանի զարգացման 2022 թվականի ծրագիրը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 20-ի N 72-Ա որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. 2023 թվականի բյուջետային գործընթացով սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը և դրա գծով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների գումարը ստանալու հայտը ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022թ. _____ N _____-Ա որոշման

ԳԵՏԱՌԻ ՎՐԱ ՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2023Թ. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» կետի պահանջներին համապատասխան:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել «Կանաչ Երևան» գործողությունների ծրագրի բնապահպանական միջոցառումները (Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշում), որոնք ուղղված են համայնքների կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը և կանաչապատմանը, աղբահանությանը, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, շրջակա միջավայրի և հանրային առողջության պահպանությանը:

Գետառը Հրազդան գետի ձախակողմյան վտակն է և խառնվում է Հրազդան գետի ջրերին նրա ստորին հոսանքներում: Հրազդան գետը հանդիսանում է Երևան քաղաքի հիմնական ջրային զարկերակը, իսկ նրա ջրերը հիմնականում օգտագործվում են գյուղատնտեսական և հանգստի նպատակներով: Քանի որ Երևան քաղաքում Գետառը հանդիսանում է կոյուղաջրերի տեղափոխման ջրանցք, ուստի սույն Ծրագրով ներկայացվում է Հրազդան գետի և Գետառի հատման հատվածում Գետառի ջրերի մաքրման կայանի կառուցման կարևորությունը: Ծրագրով նպատակ է հետապնդվում մաքրել Գետառը կոյուղաջրերից՝ միաժամանակ կանխարգելելով աղտոտված, կոյուղաջրերով հարուստ Գետառի միախառնումը Հրազդան գետին, որն էլ թափվում է Երևանյան լիճ: Գետառի ջուրը ջրերի մաքրման կայանում մաքրվելուց հետո հնարավոր կլինի վերականգնել Հրազդան գետի և նրա հարակից տարածքների էկոհամակարգն ու սանիտարահիգիենիկ ցուցանիշները:

Ծրագիրն ունի էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև ռեկրեացիոն գոտու առողջապահական նորմերի ապահովման ուղղվածություն:

Սույն Ծրագրով նկարագրվում են Գետառի էկոլոգիական վիճակի բարելավման և ռեկրեացիոն գոտու վերականգնման մի շարք միջոցառումներ, որոնք թույլ կտան կանխել Հրազդան գետի և Երևանյան լճի մեջ կոյուղաջրերի մուտքը, ինչը կնպաստի Հրազդան գետում և Երևանյան լճում առկա ջրային պոպուլյացիաների զարգացմանը, ազգաբնակչության առողջության պահպանմանը, հատկապես ներկայիս համավարակի գլոբալ տարածվածության պայմաններում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գնահատել և գույքագրել Գետառ թափվող կոյուղաջրերի ծավալները և կիրառել լիազոր մարմինների հետ համատեղ կանխարգելիչ գործիքակազմ հետագայում կոյուղաջրերը գետ թափելու բացառման նպատակով:

2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գետառը Հրազդանի ձախ վտակն է, երկարությունը՝ 24 կմ, ավազանը՝ 158 կմ²: Գետառը սկիզբ է առնում Գեղամա լեռներից 1570 մ բարձրությունից, հոսում և անցնում է Երևանի միջով, այնուհետև խառնվում Հրազդան գետին: Գետը սնվում է մթնոլորտային տեղումներից և ստորերկրյա ջրերից: Հորդացումը՝ գարնան ամիսներին: Ջրի կայուն մասը ստանում է Հրազդանից հանված ջրանցքից: Գետառի վտակներից են Ջրվեժը և Ձորաղբյուրը:

Գետառի ներկա հունը լոկ ջրանցք է, որը տարել են Նորք-Մարաշի ու Այգեստանի լանջերի փեշերով՝ ոռոգելու իր այգիներով հայտնի Երևանի կենտրոնն ու հարավը մինչև Ջրվեժ վտակին հասնելը:

2007 թվականին Խանջյան փողոցի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար Գետառը փակվեց բետոնե խողովակով՝ վրան փողոց կառուցելով: Առ 2019 թվականը Գետառ գետը Երևանի կենտրոնում տեսանելի է միայն Մյասնիկյան պողոտայի ու Խանջյան փողոցի վերջնամասում:

Ներկայումս Գետառ գետի աղտոտվածությունը հիմնականում պայմանավորված է մեծ քանակությամբ կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսական կեղտաջրերի շնորհիվ տարբեր քիմիական տարրերի ՍԹԿ նորմերի նկատմամբ բարձր պարունակությունների առկայությամբ:

Կեղտաջրերի մաքրման հիմնահարցը նկարագրված է ստորև՝ որպես մակերևութային ջրերի որակի էական մարտահրավեր:

Աղտոտման մասնակի պատճառն էլ, թերևս, գետը նետվող աղբն է: Աղբի որոշ մասը կարելի է վերագրել գետի վերին հոսանքներին մոտ տեղակայված բնակելի հատվածներին: Հարկ է նշել, որ մակերևութային ջրերի որակը տարվա ընթացքում հաստատուն չէ և կապված է եղանակային պայմանների հետ: Օրինակ, տևական անձրևներից հետո ջրի որակը գետում ժամանակավորապես վատթարանում է:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ներկայացվող բնապահպանական ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Երևանյան լճի և Հրազդանի գետի էկոլոգիական վիճակը՝ բարելավելով Հրազդան գետ լցվող Գետառ գետի ջրերի որակը:

Ծրագրի իրականացման նպատակներն են՝

- մաքրել Հրազդան գետ և Երևանյան լիճ լցվող կոյուղաջրերը,
- նվազեցնել աղտոտվածության մակարդակը,
- կանխարգելել աղտոտվածության տարածումը:

Նշված աշխատանքների կատարման արդյունքում Երևան համայնքի սահմաններից դուրս եկող Հրազդան գետը Արարատյան հարթավայրի մյուս համայքներին կհասնի (Գետափնյա, Գեղանիստ, Նորաբաց, Ձորակ, Ղուկասավան, Դաշտավան, Դարակերտ) բնապահպանական

տեսակետից առավել մաքուր ոռոգման չափորոշիչներին համապատասխան վիճակում՝ նվազեցնելով գետի և նրա առափնյա տարածքների կենսաբազմազանության (ջրային էկոհամակարգ, թռչուններ) վրա մարդածին բացասական ազդեցությունը: Հրազդան գետի ջրի որակի բարձրացումը կնպաստի նաև այդ ջրով ոռոգելի տարածքներում աճեցվող գյուղատնտեսական մթերքների որակի բարձրացմանը:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համաձայն «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» ենթակետի՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար,

- ջրային ռեսուրսների (մակերևույթային և ստորերկրյա) պահպանություն,

- ջրային ռեսուրսների և դրանց էկոհամակարգերի պահպանման գոտիների մաքրման միջոցառումները Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա, այդ թվում՝ օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով:

Ծրագրի իրականացումը բխում է «Կանաչ Երևան» գործողությունների ծրագրի բնապահպանական միջոցառումներից (հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշում), որոնք ուղղված են համայնքների կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը և կանաչապատմանը, աղբահանությանը, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, շրջակա միջավայրի և հանրային առողջության պահպանությանը: Ելնելով ծրագրի կարևորությունից՝ անհրաժեշտության դեպքում համայնքն իր միջոցներից կկատարի լրացուցիչ հատկացումներ:

Ծրագիրը նաև նպատակաուղղված է «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնների և նորմերի, ինչպես նաև «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.7.003-10 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների ապահովմանը Երևան քաղաքում:

5. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի շահառուներ են համարվում Երևան համայնքի և Արարատյան հարթավայրի մյուս համայքների (Գետափնյա, Գեղանիստ, Նորաբաց, Զորակ, Ղուկասավան, Դաշտավան, Դարակերտ) բնակիչները, ինչպես նաև մայրաքաղաք այցելած հյուրերը, զբոսաշրջիկները և այլն:

Ծրագրի իրականացումը հատկապես ներկայիս համավարակի պայմաններում կնպաստի բնակչության առողջության պահպանմանը, քանի որ կոյուղաջրերով աղտոտված ջրի առկայությունը խիստ վտանգավոր է և կարող է ստեղծել համաճարակային իրավիճակներ՝ ընդհուպ հանդիսանալով համաճարակների բռնկման օջախներ:

6. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ

Ծրագիրն ուղղված է բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծմանը: Ծրագրի իրականացման արդյունքում կլուծվեն Երևան քաղաքով, ինչպես նաև ազդակիր համայնքներով հոսող գետի տարածքներն առավել գրավիչ դարձնելու, բարենպաստ միկրոկլիմայի ստեղծման և բնակչության առողջության պահպանման խնդիրները: Ծրագրի նպատակներին ծառայող հիմնական խնդիրներն են՝

- Ջրերի մաքրման կայանում մեխանիկական մաքրման եղանակով մաքրել Գետառը կենցաղային աղբից,
- Ջրերի մաքրման կայանում կենսաբանական եղանակով մաքրել Գետառը կոյուղաջրերից,
- Կանխարգելել Գետառից կենցաղային և կոյուղային ջրերի հոսքը դեպի Հրազդան գետ և Երևանյան լիճ:

7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ծրագրի իրականացումն իրենից ներկայացնում է հետևյալ միջոցառումների ամբողջություն՝

- Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման վայրը նախնականորեն ընտրվել է Հրազդան գետ թափվող հատվածում, որը տեղակայված է Շենգավիթ վարչական շրջանի Պոլիպլաստ գործարանի մոտակայքում (նկ. 1):

-Գետառ գետի Հրազդան թափվող հատվածում նախագծել ջրերի մաքրման լոկալ կայան, որտեղ կիրականացվի ջրի մեխանիկական և կենսաբանական մաքրում, որի կառուցման նախագծման համար կհայտարարվի մրցույթ, որում մանրամասն կնկարագրվեն նախատեսվող կայանի կառուցման վայրը, չափսը:

-Ջրի մաքրման լոկալ կայանի նախագծումից հետո կհայտարարվի ջրերի մաքրման լոկալ կայանի կառուցման աշխատանքների իրականացման մրցույթ:

Նկ. 1. Գետառ և Հրազդան գետերի միախառնման տեղամաս

Համայնքին հատկացվելիք բնապահպանական վճարներից կատարվելիք մասհանման միջոցով 2023թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ աղյուսակ 1.

1. Ջրի մաքրման լոկալ կայանի Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում

Աշխատանքը ներառում է հետևյալ առաջադրանքների կատարում՝

1) Գետառի, մինչև Հրազդան գետ լցվելը, բաց հատվածների ուսումնասիրում, բնութագրիչ տվյալների հավաքագրում, վերլուծում,
2) Գետառի հիդրոլոգիական ռեժիմի հնարավորինս վերհանում,
3) Հիմնվելով փաստացի իրավիճակային ու տեխնիկական հնարավորությունների ու տվյալների, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի վրա, էկոլոգիական վիճակի բարելավման, այդ թվում՝ աղոտումներից մաքրման համակարգի առաջարկության մշակում (առնվազն 3 տարբերակ, որոնք ներառելու են մաքրման կայանի տեղի և գետի աղտոտված ջրի մաքրման տեխնոլոգիայի ընտրություն, շինարարության և շահագործման ընթացքում մոտեցնող ճանապարհի ապահովում, էլեկտրասնուցման համակարգի և ջրամատակարարման ապահովում, համալիրի տարածքի բարեկարգում),
4) Բնապահպանական և սոցիալական նախնական տվյալների հավաքում,
5) Առաջարկված տարբերակների տեխնիկատնտեսական ցուցանիշների ներկայացում և արդյունավետ տարբերակի առաջարկում,
6) Պատվիրատուի հետ համաձայնեցում և հաստատում,
7) ԿՄԿ-ի համալիրի նախագծման առաջադրանքի մշակում և ներկայացում:

Նախատեսվող ծառայությունների իրականացման ժամանակահատվածը՝ 3.5 – 4 ամիս:

2. Կեղտաջրերի մաքրման լոկալ կայանի կառուցման աշխատանքներ՝ համաձայն կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի: ԿՄԿ-ն պետք է ապահովի Հրազդան գետ կոշտ կենցաղային թափոնների մուտքի կանխարգելում և կեղտաջրերի մաքրում աէրացիայի միջոցով՝ բարելավելով ջրի որակը:

Արդյունքում ակնկալվում է 2023թ-ին «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա, այդ թվում՝ օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով իրականացնել 126701.3 հազար դրամ գումարի չափով աշխատանքներ:

Աղյուսակ 1

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազ. դր.	Ընդամենը հազ. դր
1	Ջրի մաքրման լոկալ կայանի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	հատ	1	7000.0	7000.0
2	Ջրի մաքրման լոկալ կայանի կառուցման աշխատանքներ	հատ	1	119701.3	119701.3

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԵՏԱՌԻ ՎՐԱ ՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2023Թ. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» կետի պահանջներին համապատասխան:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել «Կանաչ Երևան» գործողությունների ծրագրի բնապահպանական միջոցառումները (Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշում), որոնք ուղղված են համայնքների կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը և կանաչապատմանը, աղբահանությանը, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, շրջակա միջավայրի և հանրային առողջության պահպանությանը:

Գետառը Հրազդան գետի ձախակողմյան վտակն է և խառնվում է Հրազդան գետի ջրերին նրա ստորին հոսանքներում: Հրազդան գետը հանդիսանում է Երևան քաղաքի հիմնական ջրային զարկերակը, իսկ նրա ջրերը հիմնականում օգտագործվում են գյուղատնտեսական և հանգստի նպատակներով: Քանի որ Երևան քաղաքում Գետառը հանդիսանում է կեղտաջրերի տեղափոխման ջրանցք, ուստի սույն Ծրագրով ներկայացվում է Հրազդան գետի և Գետառի հատման հատվածում Գետառի ջրերի մաքրման կայանի կառուցման կարևորությունը: Ծրագրով նպատակ է հետապնդվում մաքրել Գետառը կեղտաջրերից՝ միաժամանակ կանխարգելելով աղտոտված, կեղտաջրերով հարուստ Գետառի միախառնումը Հրազդան գետին, որն էլ թափվում է Երևանյան լիճ: Գետառի ջուրը ջրերի մաքրման կայանում մաքրվելուց հետո հնարավոր կլինի վերականգնել Հրազդան գետի և նրա հարակից տարածքների էկոհամակարգն ու սանիտարահիգիենիկ ցուցանիշները:

Ծրագիրն ունի էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև ռեկրեացիոն գոտու առողջապահական նորմերի ապահովման ուղղվածություն:

Սույն Ծրագրով նկարագրվում են Գետառի էկոլոգիական վիճակի բարելավման և ռեկրեացիոն գոտու վերականգնման մի շարք միջոցառումներ, որոնք թույլ կտան կանխել Հրազդան գետի և Երևանյան լճի մեջ կեղտաջրերի մուտքը, ինչը կնպաստի Հրազդան գետում և Երևանյան լճում առկա ջրային պոպուլյացիաների զարգացմանը, ազգաբնակչության առողջության պահպանմանը, հատկապես ներկայիս համավարակի գլոբալ տարածվածության պայմաններում:

Ներկայացվող բնապահպանական ծրագրի հիմնական նպատակն է այս լուծումով նաև բարելավել Երևանյան լճի և Հրազդանի գետի էկոլոգիական վիճակը՝ դարձնելով այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող ռեկրեացիոն գոտի:

Ծրագրի իրականացման նպատակներն են՝

- նվազեցնել կեղտաջրերի հոսքը Հրազդան գետ և Երևանյան լիճ,
- նվազեցնել աղտոտվածության մակարդակը,
- կանխարգելել աղտոտվածության տարածումը:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» ենթակետի՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար,

- ջրային ռեսուրսների (մակերևույթային և ստորերկրյա) պահպանություն,

- ջրային ռեսուրսների և դրանց էկոհամակարգերի պահպանման գոտիների մաքրման միջոցառումները Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով:

Ծրագիրը նաև նպատակաուղղված է «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնների և նորմերի, ինչպես նաև «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.7.003-10 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների ապահովմանը Երևան քաղաքում:

Համայնքին հատկացվելիք բնապահպանական վճարներից կատարվելիք մասհանման միջոցով 2023թ. նախատեսվում է իրականացնել.

1. Ջրի մաքրման լոկալ կայանի Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում - **5000.0** հազար դրամ

2. Ջրերի մաքրման լոկալ կայանի կառուցման աշխատանքներ՝ համաձայն կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի - **121701.3** հազար դրամ

Արդյունքում ակնկալվում է 2023թ.-ին «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով իրականացնել **126701.3** հազար դրամ գումարի չափով աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԵՏԱՌԻ ՎՐԱ ՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԵՏԱՌԻ ՎՐԱ ՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**